600.0284.12.10.16

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 հոկտեմբերի 2016 թվականի №284Ա
քաղ. Երևան

«ՆՈՐԱՅՐ ՍԱՀԱԿՅԱՆ ՆԵՐՍԵՍԻ» ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՆՑ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ 159.500 ՄՀՑ ՌԱԴԻՈՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով՝

ա) Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության 2016 թվականի սեպտեմբերի 29-ի №04/11.1/12886-16 գրությամբ ներկայացված տեղեկատվությունն առ այն, որ «ՆՈՐԱՅՐ ՍԱՀԱԿՅԱՆ ՆԵՐՍԵՍԻ» անհատ ձեռնարկատերն առանց ռադիոհաճախականությունների օգտագործման համար պահանջվող թույլտվության օգտագործում է 159.500 ՄՀց ռադիոհաճախականությունը,

բ) առանց թույլտվության ռադիոհաճախականությունների օգտագործման հետազոտության արդյունքների վերաբերյալ «Հեռահաղորդակցության հանրապետական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության 2016 թվականի սեպտեմբերի 14-ի ակտը և

հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը, 5-րդ հոդվածի 2-րդ մասի «ժդ» կետը, 3-րդ մասի «ե» կետը և 60-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. «ՆՈՐԱՅՐ ՍԱՀԱԿՅԱՆ ՆԵՐՍԵՍԻ» անհատ ձեռնարկատիրոջը՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից դադարեցնել առանց թույլտվության 159.500 ՄՀց ռադիոհաճախականության օգտագործումը և այդ մասին եռօրյա ժամկետում

տեղեկացնել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ**

ք. Երևան
12 հոկտեմբերի 2016թ.
ժամը 16^{00}